

ռէալական վէպ, ճշգրիտ պատկեր է հասարակական աղէ շրջանի? Այդ պայմանով «Հեղինէն» մի առանձին

գին է ստանում իբր մի որոշ շրջանի հաւատարիմ պատկեր:

Ս. Թ.

ZOLA, Emile.—Le Docteur Pascal. Charpentier, Paris.

Ձուան վերջացնում է «Դոկտոր Պասկալ» վէպով մի շարք վէպերի, որոնց մէջ հեղինակը իրան նպատակ էր դրել ուսումնասիրել Ռուզոն-Մաքար անւանած ենթադրական ընտանիքի «բնական» և հասարակական պատմութիւնը ֆրանսիական երկրորդ կայսրութեան ժամանակ: Ով որ էմիլ Ձուլի նախկին վէպերը լըր ջօրէն կարդացել է, սպասում էր տունդակին կերպով ալ վերջին վէպի երևալուն, որը, ինչպէս հեղինակը ասում է, լրացնում է իւր աչն գործը, որ նա սկսել էր սրանից քսան տարի առաջ: Արդարև Ձուլի հսկակական գրական գործը կազմում է անկասկած մի դարեշրջան եւրոպական վիպագրութեան համար: Ձուլի գրական գործը դարուս համար աչն նորութիւնն ունէր, որ նա փորձեց ասպացուցել, որ վէպով էլ կարելի է բացատրել հասարակական ցաւերը քաղնի գիտնական հիմունքների վրա: Յենւելով գիտութիւնների վրա, Ձուլան աշխատում է մեղ բացատրել հասարակական բարք ու վարքի սկզբնապատճառները, որոնց հետեանքները արտափալում են մարդկանց գործունէութեան զանազան ճիւղերում: Յալանի է, որ գլխաւորապէս

Դարւինի և ապա ալ գիտնականների հետազօտութիւնները լաջողութեամբ ասպացուցին, որ մարդկանց ներկալ ֆիզիկական և բարոյական լատկութիւնները ժառանգած են նախկին սերունդներից: Իսկ ժառանգած լատկութիւնները միշտ հշտութեամբ երեան են դալիս, երբոր հասարակական պայմանները սոցա մի կերպ նպաստում են:

Օգտւելով գիտութեան ալս հաստատ դրութիւններից, Ձուլան վերցնում է իր վէպերի համար մի ընտանիք և պատմում է սորա անդամների բարոյական և ֆիզիկական պակասութիւնները, որոնք երևան են դալիս իրանց գործունէութեան զանազան ասպարէզներում: Նոյն ալք ընտանիքը ժամանակի ընթացքում աճում և ճիւղաւորում է, ալնպէս որ ալք նախկին ընտանիքի ախտերը և պակասութիւնները կտակւում են լաջող սերունդին, բազմաթիւ ալ ընտանիքներ, հարկաւ, նմանապէս շատ ցաւեր պէտք է թողնէին եկող սերունդներին: Ըստ աչնմ հասարակութիւնը բաղկացած լինելով ալք ընտանիքներից՝ պէտք է որ մի տեսակ հիւանդոտ դրութեան մէջ դառնէր շնորհիւ ժառանգած ախտերին:

Գրախօսական բաժինը մեզ չէ թող տալիս Զողալի մասին մանրամասնութիւնների մէջ մտնել, Դորա համար մենք լղում ենք «Մուրճ»-ում լուս տեսնող մի շարք լողածների վրալ Ֆելիքսի ստորագրութեամբ՝ Ալեքսիս դառնանք Դոկտոր Պասկալ վէպին, որ ինչպէս ասացինք, Զողալի քսան տարալ աշխատանքի եղբակացութիւնն է կազմում։ Այս վէպի մէջ Ռուզոն-Մաքար ընտանիքի վերջին աչքի ընկնող և գործող ժառանգը ներկայանում է դոկտոր Պասկալը։ Ռուզոն-Մաքար ընտանիքը տեղ էր հասարակութեանը զանազան գործող անձեր, որոնց մէջ Պասկալը միակն է, որ գիտութեանն է ծառայում։ Ուրիշները ապականել են իրանց արատներով և ոչինչ օգտաւէտ հետք չեն թողել։ Դոկտոր Պասկալը, թէև բոլորովին գերծ չէ ընտանեկան նունպէս ապականող ախտից, բայց և ալնպէս իր գիտնական աշխատանքներով մեծամեծ օգուտներ է տալիս հասարակութեանը։ Բժիշկ Պասկալը ապրում է առանձնացած իր կալքի մէջ, որ նա իր աշխատանքով էր ձեռք բերել։ Պասկալը տանից դուրս ունի հիւանդների, որոնց նա կանոնաւորապէս ալցեւում և բժշկում է իր լօրինած եղանակով։ Միևնույն ժամանակ նա զբաղւած է մի խոշոր գիտնական խնդրով, որի համար նա նիւթեր է հաւաքում և իր գրադարանի մէջ պահում։ Այն խնդիրը, որ նրան զբաղեցնում է, դա ժառանգականութեան խնդիրն է։ Այս վերաբերութեամբ դոկտոր Պասկալը ջանում է օրէնքներ գտնել, որոնց հիման վրալ մարդկանց

լալտնի լատկութիւնները ժառանգաբար անցնում են սերնդէ սերունդ։ Պասկալը վերցնում է ալց նպատակի համար իւրև նիւթ գլխատարապէս իր հարազատ ընտանիքի նախկին և ներկալ պատմութիւնը և իր հարազատ ընտանիքի ուսումնասիրութիւնը տալիս է Պասկալին բաւականին պաշար իր լատով նպատակների համար։ Բժիշկ Պասկալը միևակ չէ ապրում իր տան մէջ։ Սրա տանը ապրում է մի օրիորդ, որ Պասկալի եղբոր աղջիկն է և որին աղգականները տեղ էին Պասկալին մի լալտնի ժամանակ խնամելու և կրթելու համար։ Այս աղջիկը, որ Լլոտիլդ է կոչւում, մեծ լարզանքով և ալնարծութեամբ լսում է Պասկալին։ Օրիորդը ըմբռնում է Պասկալի տւած բոլոր դասերը և կատարում սորա հրամանները։ Բժիշկ Պասկալը Լլոտիլդին լիտլին հաւատում էր և լանձնում էր նրան իր հաւաքած նիւթերը գրադարանում կարգի բերելու և դասաւորելու համար։ Լլոտիլդը երբեմնակի արտագրում էր իր ուսուցչու թղթերը։ Ժամանակի ընթացքում նա շատ ընտելանում է իր ուսուցչի Պասկալին, ալնպէս որ մեծանալով հանդերձ՝ աղջիկը իրան զգում է իւր դոկտորի մի անբաժան ընկերուհի սր համարեա թէ ալս աղջկալ կատարեալ տէրն էր դառել։ Պասկալն էլ իր կողմից չափազանց մտերմանում է ալս աղջկալ հետ։ Ալսպլաի հանդամանքների մէջ օրիորդ Լլոտիլդը սկսում է բաւականին գերկատարել Պասկալի տան մէջ և իր ձեռքումն են դանւում դոքտորի լալտնական նիւթերի գաղտնիքները։ Բայց

նիւթերի ալն մասը, որ վերաբերում է Ռուզոն-Մաքար ընտանիքի պատմութեանը, չէ մնում գաղտնիք շատ ժամանակ: Նամանականդ ալդ բանի մասին լաւ տեղեկանում է դոկտոր Պասկալի մալրը, որ շատ վրդովւած և վիրաւորած է ալդ վերաբերմամբ և անընդհատ բողբոջում է իր որդու Նպատակների դէմ: Մալրը կարծում է, որ անկարելի և ամօթ է հրապարակ հանել իրանց ընտանիքի ալդ տեսակ պատմութիւնը: Դա իրանց վերին աստիճանի կը խալտառակէր: Առանց ալդ պատմութեան՝ էլ Ռուզոն-Մաքար ընտանիքի անդամները իրանց շատ են խալտառակել հասարակութեան մէջ, ի հարկէ աւելի վատ կը լինէր իրանց անւան համար, երբոր մի պատմութիւն կը գրէի Պասկալի մալրը շատ փառասէր և ինքնահաւան է և իրան նպատակ է դնում Պասկալի նիւթերը իրանց ընտանիքի վերաբերմամբ ոչնչացնելու: Այս դիտաւորութիւնը իրագործելու համար, նա սկսում է անսովոր կերպով լաճախել իր որդու տունը և մտերմանում է օրիորդ Կլոտիլդի հետ: Մի քիչ ժամանակից չետոյ Պասկալի մալրը համոզում է Կլոտիլդին, որ պէտք է ալն չալտնի թերթերը և ընագիրները գողանալ և ալրել Կլոտիլդը հեշտութեամբ համաձայնում է և վճռում է ալդ բանը կատարելու: Մի գիշեր, երբ որ Պասկալը քնած է լինում, օրիորդ Կլոտիլդը ծածուկ մտնում է Պասկալի գրադարանը և սկսում է ալդ մտադրութիւնը իրագործել: Հէնց բժշկի բնագիրները և թերթերը զողանալիս, Պասկալը խմանում է և, վերկենալով

քնից, լանկարծ բռնում է Կլոտիլդին լանցանք գործելու մէջ: Այդ միջոցին Պասկալը սաստիկ գրկում և սեղմում է իր կրծքին օրիորդին: Անուշտեւ բացատրելով օրիորդին ալդ քալերի լանցաւորութիւնը և անարդարութիւնը, Պասկալը պատմում է նրան մանրամասնօրէն իւր նիւթերի նշանակութիւնը և Ռուզոն-Մաքար ընտանիքի պատմութեան գիտական հետաքրքրութիւնը: Այս դէպքից չետոյ արտապալտում է Կլոտիլդի և Պասկալի մէջ ալն մի խաղաք մէրը, որ սոցա մէջ ծագել էր, բաց որ մինչև ալդ ժամանակ առիթ չէր ունեցել երևան գալու Կլոտիլդը սիրում է իւր ուսուցչուն մաքուր և անկեղծ սիրով: Նա սիրում է Պասկալին անձնւիրաբար: Նորա սէրը ալնքան վառ է, որ նա մինչև անգամ անգիտակցաբար մոռացութեան է տալիս Պասկալի հետ ունեցած ազդականութիւնը: Խօսք չկայ, որ ալս սէրը պէտք է լանցաւոր համարել, քանի որ դա քալքալում է ազդականութեան սուրբ կապերը, սակալն Կլոտիլդի սէրը ալնքան սուրբ է, սա ալնքան մաքուր և աղատ է որ և է արտաքին ազդեցութիւնից, որ մարդս սրբացնում է ալդ սէրը, աչքի առաջ ունենալով Կլոտիլդի ներքին աշխարհը, որ շատ խորհրդաւոր է: Մինեղն գիտողութիւնը չի կարելի անել Պասկալի սիրոյ մասին, որովհետեւ Պասկալի մէջ սէրը երևում է լեւաճ աւելի կրքի վրայ, որ նրան չափաւանդ է: Ահա ալն ախտերից մինը, որ բժշկի Պասկալը ժառանգել էր, թէն ինքը Պասկալը իրան

զերծ էր կարծում աղալսի մի բարոյական պակասութիւնից: Բժիշկ Պասկալը ապրում է Կլոտիլդի հետ հրապարակապէս, առանց ծածկելու: Երբոր Պասկալի մալը իմանում է իր որդու չարաբերութիւնները Կլոտիլդի հետ, նա աշխատում է սիրահարներին միմեանցից բաժանել, գտնելով որ դա մի մեծ խաղաղութիւն է: Վերջապէս Կլոտիլդին հեռացնում են Պասկալից և աղջկա մանակ սորա մօրը լացողում է Պասկալի աչն լալտնի նիւթերը և թըղթերը դողանալ և ալիւ: Հէնց աղջկային դռնը հիւանդ լինելուց մեռնում է և թողնում է իր գիտնական աշխատանքները և նիւթերը իր նախկին աշակերտ բժիշկ Ռամօնի, որ պիտի շարունակէր Պասկալի սկսած հետազոտութիւնները: Պասկալի մահից չետո՛ւ Կլոտիլդը հնում է մի երեխալ և ալս երեխալի մասին Զոլան հարց է դնում թէ նա ինչ կը լինի:

Վէպի ֆաբուլան շատ պարզ և հասարակ է, բայց նրա նպատակը մեծ է: Վէպի նպատակն է ապացուցանել, որ չնայած միջնադարի (milieu) նպաստաւոր պայմաններին, որ պիտի մարդկանց բարոյական ամբողջեան մէջ պահէին, ժառանգականութեան օրէնքները շարունակում են դարձնալ անխնայ կերպով և լոգիկական չարատեսութեամբ իրանց գործը: Հարկաւ, աղջկայինքները, որ գիտութիւնը գտել է, ունին մեծ նշանակութիւն հասարակական կեանքի համար: Աղալսով գիտութիւնը վերափոխեց մարդկային աշխարհայեցողութիւնը, որ պիտի հա-

մարել դարուս ամենամեծ լառաջագէտ գործերից մինը: Սակայն միակողմանի կը լինէր, եթէ մենք չեկավարէինք միայն լիւծ օրէնքներով մարդկանց բարոյական աշխարհի մասին դատելու: Զոլալի վերջին վէպի մէջն էլ տիրապետում է աղջկային ամբողջութիւնը և աշխարհը է անուամբ անհրաժեշտ տեսակէտը, որ լենում է հասարակական պալմանների վրա՝ մարդկային բարոյական երեղծները բացատրելու համար: Ուրեմն ալս նպատակի համար անհրաժեշտ է հասարակական կեանքի պայմանների ճանաչողութիւնը և զիտողութիւնը, որովհետեւ սոքա որոշ գոյն են տալիս մարդկանց սովորութիւններին, հալեացքներին, պակասութիւններին և բոլոր աչն լատկութիւններին, որոնք բնորոշում են հասարակութեան բարոյական էութիւնը: Եթէ հասարակական կեանքի պայմանները փոխւում են գէպի լաւը կամ վատը, մարդկանց բարոյական լատկութիւններն էլ փոխւում են աղջկային օղջութեամբ: Ուրեմն խնդիրը ալստեղ վերաբերում է հասարակական կեանքի փոփոխութեանը, որի աղջկայինքները մարդկանց բարք ու վարքի վրալ նշանաւոր է, ալսպէս որ նոյն իսկ ժառանգած պակասութիւնների և ախտերի չար բնաւորութիւնը չէզոքանում և մինչև անգամ վերանում է: Ըստ աչն մարդկանց բարոյական պակասութիւնները ոչ միայն ժառանգւում են, ինչպէս Զոլան կարծում է, ալս նոքա մասամբ և ուղղակի բղխում են աչն հասարակական պայմաններից, որոնց մէջ մար-

գիւղ գտնուում են:

Իբրև եզրակացութիւն իր նախկին աշխատանքների, Զուլան ալս վերջին վէպի մէջ արտապատում է ամենապարզ կերպով իր ամբողջ հաւատացքը, որ նա անց էր կացնում իր բոլոր քսան վէպերի մէջ: Այս վէպը ալնքան պարզ և ամբողջ գրածք է, որ ընթերցողը պէտք չունի սրան հասկանալու համար ծանօթանալու

Զուլալի նախկին գրածքների հետ: Միայն վերջին վէպով ընթերցողը լաւ ծանօթանում է Զուլալի աշխարհայեցողութեան հետ, որ իսկապէս մի նորութիւն չէ, բայց հետաքրքիր է, որովհետև դա վէպի ձևով է երևան գալիս շնորհիւ Զուլալի հանճարեղ գրչի:

Գ. Վ.